



Կարգապահական գործ թիվ 20002

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2020թ-ի սեպտեմբերի 30-ի թիվ 108-րդ ԿԳ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ԹԻՎ ԿԳ/81-Ա

**ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՏԻԳՐԱՆ ԵԳՈՐՅԱՆԻ ԵՎ ԼՈՒՍԻՆԵ ՀԱԿՈՐՅԱՆԻՆ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ
ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ նաև Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Խորհրդի անդամ Հարություն Հարությունյանի, Խորհրդի անդամներ՝ Գայանե Դեմիրջյանի, Տիգրան Խուրշուդյանի, Կարեն Մեժլումյանի, Արմեն Ֆերոյանի, Սիմոն Բաբայանի և Կարեն Սարգսյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Մարիամ Պետրոսյանի,
քննության առնելով փաստաբաններ Տիգրան Եգորյանին (արտոնագիր՝ 1187)
և Լուսինե Հակոբյանին (արտոնագիր՝ 1203) կարգապահական
պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Պալատում 27.12.2019թ. (մուտք՝ թիվ 3922-19) մուտքագրվել է Մանե Սամվելի Հովհաննիսյանի դիմումը (**այսուհետ՝ նաև Դիմող**) դիմումը, որով վերջինս հայտնել է հետևյալը.

2017 թվականի օգոստոսի 10-ին Դիմողի, ինչպես նաև Լուսինե Հակոբյանի և Տիգրան Եգորյանի (**այսուհետ՝ Փաստաբաններ**) միջև կնքվել է փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիր: Հաշվի առնելով, որ ինքը վստահում էր Լուսինե Հակոբյանին, և որևէ կասկած չկար վերջինիս ամուսնու՝ Տիգրան Եգորյանի գործողություններում, ինքը ստորագրում էր իրեն առաջարկվող բոլոր փաստաթղթերը՝ վստահեցված լինելով, որ բխում է իր շահերից:

Դիմողը նշել է, որ պայմանագիր կնքելուց հետո ինքը պարբերաբար կատարել է 3.000.000 ՀՀ դրամի վճարում՝ մատուցվելիք ծառայության համար, իսկ

փաստաբանները պարտավորվել էին հավաքագրել իր ամուսնու գույքի վերաբերյալ տեղեկատվություն, վարել բանակցություններ իր ամուսնու հետ՝ ալիմենտի, գույքային և այլ հարաբերությունների, երեխայի կրթության և լիարժեք կենսագործունեության համար անհրաժեշտ ծախսերի և կացարանի հարցերը կարգավորելու մասին և դիմել դատարան նշված հարցերով՝ ըստ անհրաժեշտության: Մինչդեռ, ամուսնու գույքի վերաբերյալ տեղեկատվությունը շրջանցվել է, և ինքը երբևէ նման տեղեկատվություն վերջիններից չի ստացել, նշված պահանջով դատարան չեն դիմել՝ վստահեցնելով, որ դա բխում է իր շահերից: Արդյունքում, փաստաբանները շուրջ երկու տարի ձգձգել են նշված հարցերի կարգավորումը (այդ ընթացքում իրենք հանդիպել են ընդամենը մի քանի անգամ), և փաստացի կատարված գործողությունները չեն բխել իր շահերից: Նշված հարցերի կարգավորման համար փաստաբան Տիգրան Եգորյանի կողմից կազմվել է «Պայմանագիր» վերտառությամբ փաստաթուղթ, որով, ըստ փաստաբանի, պետք է կարգավորվեին բոլոր խնդիրները:

Դիմողը հայտնել է, որ 27.04.2019 թվականին իր և ամուսնու միջև ստորագրվել է ալիմենտի, գույքային և այլ հարաբերությունների, երեխայի կրթության և լիարժեք կենսագործունեության համար անհրաժեշտ ծախսերի և կացարանի հարցերը կարգավորելու մասին պայմանագիր (**այսուհետ՝ Պայմանագիր**), որով պետք է կատարվեր անշարժ գույքի փոխանցում իր նախկին ամուսնուց՝ երեխայի անվամբ, սակայն, ինչպես պարզվեց, նշված գույքը երբևէ իր ամուսնուն չի պատկանել, հետևաբար չէր կարող այն փոխանցել: Դիմողը նշել է, որ պայմանագրով սահմանվել է անշարժ գույքի փոխանցման պարտականություն, սակայն, ինչպես հետագայում ինքն իմացել է, անշարժ գույքի հետ կապված գործարքներն օրենսդրությամբ ենթակա են նոտարական վավերացման, ուստի անշարժ գույքի մասով այն համարվում է առոչինչ գործարք, քանի որ այն ոչ պատշաճ կազմված լինելու պատճառով չի ենթարկվել նոտարական վավերացման: Դիմողը նաև հավելել է, որ պայմանագրով նախատեսված և դրանից բխող որևէ գործողություն իր ամուսնու կողմից մինչ նույն օրը չեն կատարվել, իսկ դրա մնացած մասերն ըստ էության ունեն դեկլարատիվ բնույթ, վերացական են և կատարման համար գրեթե անհնարին, ուստի այն չի կարող համարվել կողմերի իրական կամահայտնության արդյունքում կազմված ակտ:

Դիմողը նաև նշել է, որ 2019 թվականի սկզբներին Տիգրան Եգորյանի կողմից իրեն ներկայացվեց ծանուցում այն մասին, որ իր կողմից արդեն իսկ վճարված 3.000.000 ՀՀ դրամ գումարից բացի ինքը պետք է վճարի ևս մոտ 5.000.000 ՀՀ դրամ՝ իբրև մոտ 76 ժամ մատուցած ծառայության դիմաց վճարում այն դեպքում, երբ ծառայություն է մատուցվել փաստացի ընդամենը մի քանի ժամ, այն էլ՝ մի քանի անգամ կարճ հանդիպումների տեսքով, որի դիմաց և պայմանագիր կազմելու համար արդեն իսկ վճարվել էր 3.000.000 ՀՀ դրամ գումար:

Դիմողը հետագայում տեղեկացել է, որ փաստաբան Տիգրան Եգորյանն իր դեմ հայց է ներկայացրել դատարան՝ 5.000.000 ՀՀ դրամ գումարի բռնագանձման պահանջով, իսկ հայցադիմումը և կից փաստաթղթերն ուսումնասիրելով՝ ինքը

պարզել է, որ փաստաբանը հայցի հիմքում դրել է իրեն խաբեության և մոլորեցնելու միջոցով ստորագրած մանր տառերով որոշ ընդունման-հանձնման ակտեր, իբրև մատուցված (սակայն իրականում չմատուցված) ծառայության վերաբերյալ, և դրանից զատ նախատեսել է նաև պայմանագրով սահմանված բոլոր գումարների, այդ թվում՝ երեխային փոխանցվող բնակարանի և ալիմենտի գումարի 25 տոկոս պարգևավճար: Ըստ դիմողի՝ պարգևավճարի մասով իրեն պարզաբանվել էր այլ բան, սակայն մոլորության արդյունքում ինքը ստորագրել է այլ բան:

Դիմումին կից, ի թիվս այլ փաստաթղթերի, ներկայացվել են նաև վերը վկայակոչված պայմանագրերի, ընդունման-հանձնման ակտերի պատճենները:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

Պալատի նախագահի 23.01.2020թ. թիվ 19-Ա/ԿԳ-20002 որոշման հիման վրա փաստաաններ Տիգրան Եգորյանի և Լուսինե Հակոբյանի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ՝ նաև Օրենք**) 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Փաստաբանի վարքագծի կանոնագիրք**) 2.6.1, 2.7.1, 2.7.2 և 3.5.5 ենթակետերի խախտման հատկանիշներով:

29.01.2020թ. կարգապահական գործը հանձնվել է կարգապահական գործը նախապատրաստող անձ Ռուբեն Բալոյանին (**այսուհետ նաև՝ Նախապատրաստող**):

3. Դիմողի և Պատասխանողների համառոտ բացատրությունները, վկաների ցուցմունքները.

3.1. Դիմողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Դիմողը բացատրություն չի ներկայացրել:

Դիմողի ներկայացուցիչը Պալատի խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որի համաձայն Տիգրան Եգորյանն իրեն հավաստիացրել է, որ կազմված պայմանագիրը կվավերացվի նոտարական կարգով, ի պատասխան իր այն դիտարկման, որ եթե պայմանագիրը չի վավերացվելու նոտարական կարգով, ապա դրա անհրաժեշտությունը չկա: Դիմողը միշտ դժգոհել է Փաստաբաններից, նա խնդրել է, որ իր ամուսնու հետ բանակցություններին նաև ինքը մասնակցի, սակայն Տիգրան Եգորյանն իրեն մերժել է: Արդյունքում կազմված եռակողմ պայմանագիրը չվավերացվեց նոտարական կարգով և որևէ արդյունք չտվեց:

3.2. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Գործի նախապատրաստման ընթացքում Պատասխանողները բացատրություն չեն ներկայացրել:

Տիգրան Եգորյանը Պալատի խորհրդին է ներկայացրել դիրքորոշում, որով հայտնել է հետևյալը.

Ինքը ստանձնել է պարտականություն պարզելու տեղեկություններ Արտյոմ Հովհաննիսյանի գույքի մասին, ինչը և կատարել է և տեղեկացրել Դիմողին:

Փաստաբանները պարզել են, որ Երևան քաղաքի Տերյան 62, մուտք 5, թիվ 37 բնակարանը (**այսուհետ՝ Բնակարան**) սեփականության իրավունքով չէր պատկանում Արտյոմ Հովհաննիսյանին, ինչի մասին տեղյակ էր Դիմողը: Ինչ վերաբերում է 27.04.2019թ. կնքված պայմանագրի նոտարական վավերացմանը, ապա Տիգրան Եգորյանը նշել է, որ իրենք նման պարտականություն չեն ստանձնել 10.08.2017թ. կնքված պայմանագրով:

Լուսինե Հակոբյանը ՀՀ փաստաբանների պալատի խորհրդին ուղղված իր գրությամբ հայտնել է, որ Դիմողը իրենից պահանջել է Բնակարանը իր երեխային փոխանցել, ինչին չի համաձայնվել Արտյոմ Հովհաննիսյանը: Դիմողը տեղյակ եղել է, որ Բնակարանը պատկանել է Արտյոմ Հովհաննիսյանի մորը և ծառայությունների մատուցման ողջ ընթացքում հետաքրքրվում էր, թե ինչ կարելի է անել, եթե Արտյոմ Հովհաննիսյանը մայրը հրաժարվի Բնակարանն իրեն փոխանցել:

Ըստ Լուսինե Հակոբյանի Դիմողը ստում է և իր գործողությունները նպատակ են հետապնդում հնարավորինս քիչ գումար ծախսել շուրջ երկու տարի իրեն մատուցված ծառայությունների դիմաց:

Փաստաբաններն ի թիվս այլ փաստաթղթերի ներկայացրել են նաև ծառայությունների հանձնման-ընդունման ակտ, որը ստորագրված է և՛ իրենց և՛ Դիմողի կողմից:

3.3. Վկաների ցուցմունքները.

Սույն կարգապահական գործով վկա է ներգրավվել Դիմողի հայրը Սամվել Վահանյանը, ով հայտնել է, որ դիմել է Լուսինե Հակոբյանին Դիմողի ամուսնալուծության հարցով: Լուսինե Հակոբյանն իրեն ներկայացրել է Տիգրան Եգորյանին և նա որոշ ժամանակ հետո խնդրել է, որ Տիգրան Եգորյանը զբաղվի իր դստեր ապահարզանի հարցով: Վկան Տիգրան Եգորյանին տեղեկացրել է, որ Դիմողի ամուսնու հայրը իրեն տեղեկացրել է, որ Դիմողի ամուսինը ոչինչ չունի: Տիգրան Եգորյանը ցույց է տվել իրեն իր կազմած պայմանագիրը, նշելով, թե ինչ պարտավորություններ է նախատեսված, որ Դիմողի ամուսինը կատարելու է Դիմողի համար: Դիմողը զարմացել է, թե ինչու պետք է Դիմողի ամուսինը համաձայնվի նման պայմաններով պայմանագիր ստորագրել, սակայն հետագայում, տեղեկացել է, որ Դիմողի նախկին ամուսինն ունի գույք: Ինքը մանրամասն չի ծանոթացել Պայմանագրին, թեև առանձին պարզաբանումներ Տիգրան Եգորյանի կողմից իրեն ներկայացվել են և նաև տրամադրվել է Պայմանագրի օրինակը, որն ինքը դեն է նետել, քանի որ վստահել է Տիգրան Եգորյանին:

4. Կարգապահական գործ նախապատրաստողի եզրակացությունը, եզրակացության վերաբերյալ առարկությունները և գործի հանձնումը խորհրդին.

Կարգապահական գործի նախապատրաստման արդյունքում Նախապատրաստողը 26.03.2020թ. կազմել է եզրակացություն:

Նախապատրաստողի եզրակացության վերաբերյալ Փաստաբաններն առարկություն չեն ներկայացրել:

Կարգապահական գործը խորհրդին է հանձնվել 30.03.2020 թվականին:

Խորհրդի նիստը տեղի են ունեցել 08.09.2020թ., 22.09.2020թ., 29.09.2020թ-ին, 30.09.2020թ-ին, Պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Նոր Կանոնագիրք) հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 3.10.3 ենթակետի համաձայն՝ Պալատի խորհուրդը հիմք է ընդունում Նախապատրաստողի եզրակացությամբ հաստատված փաստերը, բացառությամբ այն դեպքի, երբ գործում գտնվող ապացույցները կամ Պալատի խորհրդին ներկայացված լրացուցիչ ապացույցները՝ սույն կարգին համապատասխան գնահատելու արդյունքում Պալատի խորհուրդն այլ եզրահանգման է գալիս:

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստողի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) «Եզոր սիստեմ» ՍՊԸ-ի, ի դեմս փաստաբան Տիգրան Էդուարդի Եզորյանի և անհատ ձեռնարկատեր փաստաբան Լուսինե Տարիելի Հակոբյանի, որոնք հանդես են եկել, որպես կատարողներ, մի կողմից, և Լուսինե Սամվելի Հովհաննիսյանի, որը հանդես է եկել, որպես պատվիրատու, մյուս կողմից 10.08.2017թ. կնքվել է փաստաբանական ծառայություններ մատուցելու վերաբերյալ պայմանագիր: *Սույն փաստը հաստատվում է 10.08.2017թ. պայմանագրով:*

1.1) 10.08.2017թ. պայմանագրով կատարող կողմը, ի թիվ այլ պարտավորությունների, պարտավորվել է՝

- Կատարել հարցումներ Պատվիրատուի պատասխանող կողմի՝ Արտյոմ Հովհաննիսյանին պատկանող գույքի, դրամական միջոցներ և այլ գույքային իրավունքների հայտնաբերման նպատակով (1.1 կետ).

- Վարել Պատվիրատուի պատասխանող կողմի՝ Արտյոմ Հովհաննիսյանի հետ բանակցություններ՝ Պատվիրատուի ալիմենտի, իր և նրանց ընդհանուր երեխայի՝ Ալեն Հովհաննիսյանի, կյանքի և Առողջության ապահովագրության, կրթության (դպրոցականից մինչև բուհական) և լիարժեք կենսագործունեության համար այլ անհրաժեշտ ծախսերի, Պատվիրատուի և նրանց ընդհանուր երեխայի

կացարանի վերաբերյալ (1.2 կետ).

- Նույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված բանակցությունները փոխադարձաբար ընդունելի լինելու դեպքում կազմել և տրամադրել ստորագրման համապատասխան պայմանագիր, կազմակերպել պայմանագրի լիարժեք քննարկում, պարզաբանում և ստորագրումը (1.3 կետ):

2) 27.04.2019 թվականին Մանե Հովհաննիսյանի (Կողմ 2) և Արտյոմ Հովհաննիսյանի (Կողմ 1) միջև (անչափահաս երեխան նույնպես նշվել է, որպես երրորդ կողմ) կնքվել է պայմանագիր, որով կողմերը լուծել են միմյանց միջև գույքային և ոչ գույքային վեճը: *Նշված փաստը հաստատվում է 27.04.2019թ. պայմանագրի պատճենով:*

2.1) Պայմանագրի 1.8.1. ենթակետի համաձայն՝ *Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Կողմ 1-ը պարտավորվում է ապահովել ք.Երևան, Տերյան 62, մուտք 5-րդ, բնակարան 37 հասցեում գտնվող բնակարանը սեփականության իրավունքով Կողմ 3-ին փոխանցումը:*

3) Պայմանագիրը կազմվել և կնքվել է Մանե Հովհաննիսյանի համար՝ փաստաբաններ Լուսինե Հակոբյանի և Տիգրան Եգորյանի օգնությամբ՝ ի կատարումն 10.08.2017թ. պայմանագրի: *Նշված փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով և վկայի ցուցմունքով:*

4) «Եգոր սիստեմ» ՍՊԸ-ի, ի դեմս Տիգրան Եգորյանի և Մանե Հովհաննիսյանի միջև 17.12.2018թ. կնքվել է «10.08.2017թ. կնքված պայմանագրով նախատեսված ծառայությունների վերաբերյալ» ընդունման-հանձնման ակտ: *Սույն փաստը հաստատվում է 17.12.2018թ. ակտի պատճենով:*

5) Երևան քաղաքի Տերյան 62, մուտք 5-րդ, բնակարան 37 հասցեում գտնվող բնակարանը սեփականության իրավունքով չի պատկանել Արտյոմ Հովհաննիսյանին, ինչի մասին Դիմողը տեղեկացված եղել է: Սույն փաստը հաստատվում է Դիմողի և փաստաբանների բացատրություններով:

6) 27.04.2019թ. պայմանագիրը նոտարական վավերացման չի ենթարկվել: Սույն փաստը հաստատվում է 27.04.2019թ. պայմանագրի պատճենով, Դիմողի և Փաստաբանների բացատրություններով:

7) Փաստաբանները ստանձնել են Արտյոմ Հովհաննիսյանի գույքի մասին տեղեկություն պարզելու պարտականություն և կատարել են այն, սույն փաստը հաստատվում է փաստաբանների բացատրությամբ, ՀՀ ԿԱ ԱԳԿ պետական կոմիտեի 14.09.2017թ. տեղեկանքի պատճենով, ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության տեղեկանքի պատճենով:

8) Փաստաբանները չեն պնդել, որպեսզի 27.04.2019թ. պայմանագիրը վավերացվի նոտարի կողմից՝ համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ

հողվածի 2-րդ մասի¹ և 595-րդ 2-րդ մասի², որպես Երևան քաղաքի Տերյան 62, մուտք 5-րդ, թիվ 37 բնակարանի պայմանի մասով անշարժ գույքի նվիրատվության նախնական պայմանագիր: Սույն փաստը հաստատվում է Դիմողի բացատրություններով, վկայի ցուցմունքներով և Տիգրան Եգորյանի 30.09.2020թ. դիրքորոշմամբ:

6. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի ընդհանուր դեպարտամենտի ղեկավարի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝

Ա. Տիգրան Եգորյանը փաստաբան է հանդիսանում 15.10.2011թ-ից և 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում նրա նկատմամբ 13 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, չհաշված սույն կարգապահական վարույթը:

Տիգրան Եգորյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթներից 7-ը կարճվել է, իսկ 6-ի դեպքում՝ կիրառվել է կարգապահական տույժ, որոնցից 4-ի դեպքում խորհրդի որոշումները բողոքարկվել են Տիգրան Եգորյանի կողմից, մեկ տույժը մարվել է, իսկ ևս մեկ տույժը տեղեկանքի տրամադրման պահին մարված չի եղել:

Բ. Լուսինե Սահակյանը փաստաբան է հանդիսանում 15.10.2011թ-ից և 2015-2020թթ. ընկած ժամանակահատվածում նրա նկատմամբ 3 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ, չհաշված սույն կարգապահական վարույթը:

Լուսինե Սահակյանի նկատմամբ հարուցված կարգապահական վարույթներից 1-ը կարճվել է, մյուսով կիրառված կարգապահական տույժը մարված է և երրորդ կարգապահական վարույթով կայացված խորհրդի որոշումը բողոքարկվել է դատական կարգով:

7. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբաններ Տիգրան Եգորյանը և Լուսինե Հակոբյանը ենթակա են պատասխանատվության Օրենքի 19-րդ հոդվածի, Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.1, 2.7.1 և 2.7.2 ենթակետերի խախտման համար, իսկ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5 ենթակետի պահանջների խախտման մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է՝

¹ Նախնական պայմանագիրը կնքվում է հիմնական պայմանագրի համար սահմանված ձևով, իսկ եթե հիմնական պայմանագրի ձևը սահմանված չէ, ապա՝ գրավոր: Նախնական պայմանագրի ձևի մասին կանոնները չպահպանելն այն դարձնում է առոչինչ:

² Անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:

1) ազնվորեն և բարեխղճորեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով.

2) պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները.

➤ **Փաստաբանի կողմից Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.1, 2.7.1 և 2.7.2 ենթակետերի խախտման մասով՝**

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.1 ենթակետի համաձայն՝ Օրենքի և մասնագիտական վարվելակերպի պահանջներին համապատասխան՝ փաստաբանը միշտ պետք է գործի ելնելով **վստահորդի նպաստավոր շահերից** և այդ շահերը պետք է բխեն իր շահերից վեր:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.1 ենթակետի համաձայն՝ Փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է **բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն** և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հոնեորական արվեստի տիրապետում:

Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, **ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պարզաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:**

Սույն գործով հաստատված է այն փաստը, որ Փաստաբանները ստանձնել են Դիմողի ամուսնու Արտյոմ Հովհաննիսյանի հետ բանակցություններ վարելու պարտականություն, որը վերաբերելու էր Դիմողի ալիմենտի, նրանց ընդհանուր երեխայի՝ Ալեն Հովհաննիսյանի, կյանքի և առողջության ապահովագրության, կրթության (դպրոցականից մինչև բուհական) և լիարժեք կենսագործունեության համար այլ անհրաժեշտ ծախսերի, Դիմողի և նրանց ընդհանուր երեխայի կացարանի ապահովմանը:

Փաստաբանները պարտավորվել են նաև բանակցությունները փոխադարձաբար ընդունելի լինելու դեպքում կազմել և տրամադրել ստորագրման համապատասխան պայմանագիր, կազմակերպել պայմանագրի լիարժեք քննարկում, պարզաբանում և ստորագրում:

Այս պարտականությունների կատարման շրջանակում Փաստաբանների բանակցությունների արդյունքում կազմվել է Պայմանագիրը, որով սահմանվել է ի թիվս այլոց հետևյալ պայմանը.

Պայմանագրի 1.8.1. ենթակետի համաձայն՝ **Կողմերի փոխադարձ**

համաձայնությամբ Կողմ 1-ը պարտավորվում է ապահովել ք.Երևան, Տերյան 62, մուտք 5-րդ, բնակարան 37 հասցեում գտնվող բնակարանը սեփականության իրավունքով Կողմ 3-ին փոխանցումը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 445-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է՝ Նախնական պայմանագիրը կնքվում է հիմնական պայմանագրի համար սահմանված ձևով, իսկ եթե հիմնական պայմանագրի ձևը սահմանված չէ, ապա՝ գրավոր: Նախնական պայմանագրի ձևի մասին կանոնները չպահպանելն այն դարձնում է առոչինչ:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 595-րդ 2-րդ մասը սահմանում է՝ **Անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման:**

Բացի այդ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 299-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ սույն հոդվածի 3-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված նոտարական վավերացման պահանջը չի տարածվում սույն օրենսգրքի 204.1, 213, 225, 263, 562, 572, 595, 610, 654, 662, 682, 686 կամ 959 հոդվածներով նախատեսված, ինչպես նաև անշարժ գույքով ապահովված վարկերի խմբային փոխանցման պայմանագրերի վրա, անշարժ գույքի միավորման կամ բաժանման մասին պայմանագրերի վրա, եթե դրանց բոլոր պայմանները շարադրված են Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատած օրինակելի պայմանագրերի պայմաններին համապատասխան, չեն պարունակում այլ պայմաններ և այդ պայմանագրերում կողմերի ստորագրությունների իսկությունը ճանաչվել է գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով սահմանված կարգով:

Վերը նշված նորմը նախատեսում է անշարժ գույքին առնչվող այն գործարքների տեսակները, որոնց դեպքում նոտարական վավերացման պահանջը պարտադիր չէ, իսկ Պայմանագիրը այդ գործարքներից որևէ մեկի հետ չի նույնանում, ինչից էլ բխում է, որ Պայմանագիրը, որպես նաև անշարժ գույքի հետ կապված հարաբերություն կարգավորող գործարք, պարտադիր ենթակա էր նոտարական վավերացման:

Փաստաբանների կողմից որպես ծառայության մատուցման արդյունք կազմված պայմանագիրը խնդրահարույց է երկու տեսանկյունից.

Ա. Այն չի համապատասխանում Հայաստանի Հանրապետությունում գործող օրենսդրության պահանջներին, քանի որ պարունակում է անշարժ գույքի փոխանցման վերաբերյալ պայման, սակայն չի ստացել նոտարական վավերացում:

Բ. Անշարժ գույքը չի պատկանել պայմանագիրը կնքող և այն փոխանցելու պարտավորություն ստանձնած անձին:

Ակնհայտ է, որ Փաստաբանների կողմից կազմված Պայմանագիրը առնվազն անշարժ գույքի փոխանցման մասով որևէ իրավական հետևանք առաջացնել չէր կարող: Նման պայմաններում Խորհուրդն արձանագրում է, որ Փաստաբանները չեն դրսևորել բարձր մասնագիտական պատրաստվածություն և օրենսդրության իմացություն, չեն ուսումնասիրել վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքները, այդ թվում չեն բացահայտել նրա իրական շահը և դրա իրագործման իրավական կառուցակարգը, չեն ձեռնարկել հանձնարարության

պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարումը, դրանով իսկ բարեխղճորեն չեն պաշտպանել վստահորդի իրավունքները և օրինական շահերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված բոլոր միջոցներով ու եղանակներով:

Լինելով պրոֆեսիոնալ իրավաբաններ, փաստաբանները ցանկացած պարագայում կարող են կազմել տարբեր բնույթի փաստաթղթեր և դրանք ներկայացնել որպես ծառայությունների մատուցմանն ուղղված գործողությունների կատարում, սակայն փաստաբանի կողմից կազմված փաստաթղթերը և ձեռնարկված միջոցները կարող են դիտարկվել որպես ծառայությունների պատշաճ և բարեխիղճ մատուցմանն ուղղված գործողություններ միայն այն դեպքում, եթե դրանք բխում են վստահորդի շահերից և/կամ ուղղված են վստահորդի հանձնարարության կատարմանը և հնարավոր շահի ապահովմանը:

Խորհուրդն արձանագրում է, որ տվյալ դեպքում Փաստաբանների կողմից կազմված և բանակցությունների արդյունքում ստորագրված փաստաթուղթ հանդիսացող Պայմանագիրը հակասել է գործող օրենսդրության պահանջներին և չի ապահովել Դիմողի կողմից ակնկալված հնարավոր արդյունքի հասնելը:

ՄԱԿ-ի կողմից ընդունված Փաստաբանների հիմնական սկզբունքների 14-րդ կետի համաձայն՝ *փաստաբաններն իրենց վստահորդների իրավունքները պաշտպանելիս և արդարադատության իրականացմանը նպաստելիս. . . պարտավոր են մշտապես գործել ազատ և բարեխիղճ՝ օրենքի և փաստաբանի մասնագիտության ճանաչված չափորոշիչների և էթիկայի համաձայն:*

Նույն սկզբունքների 15-րդ կետի համաձայն՝ *փաստաբանները պետք է մշտապես լինեն լոյալ իրենց վստահորդների նկատմամբ և հարգեն իրենց վստահորդների շահերը:*

Թե՛ Կանոնագիրքը և թե՛ վերը մեջբերված միջազգային իրավական ակտերը հստակորեն սահմանում են փաստաբանի պարտականությունները վստահորդին մատուցել պատշաճ և ժամանակին փաստաբանական ծառայություն: Ըստ էության, թե՛ Կանոնագիրքը և թե՛ վերոնշյալ միջազգային իրավական փաստաթղթերը փաստաբանի քննարկվող երկու պարտականությունը դիտարկում են մասնագիտական բարեխղճության և ջանասիրության բաղադրատարր: Ավելին՝ Փաստաբանների հիմնական սկզբունքների 14-րդ կետով փաստաբանների մասնագիտական բարեխղճության չափանիշ է համարվում ներպետական օրենսդրությամբ փաստաբանի վրա դրված չափանիշներն ու էթիկայի նորմերը պահպանելը և կատարելը: Տվյալ պարագայում այդպիսիք սահմանված են Օրենքով և Կանոնագրքով:

Մասնագիտական բարեխղճության սկզբունքի խախտում է հանդիսանում փաստաբանի ցանկացած այնպիսի վարքագիծ, որը դրսևորվում է վստահորդին

փաստաբանական ծառայության ոչ բարեխիղճ մատուցմամբ՝ այդ թվում նաև օրենսդրության չիմացության արդյունքում:

«Վ փաստաբանների պալատի ընդհանուր ժողովի 19.10.2019թ. թիվ 1-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ Նոր կանոնագրք) 10.4 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ կարգապահական վարույթը հարուցվել է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի կետի կամ ենթակետի հիմքով, իսկ նոր խմբագրությամբ Կանոնագրքը նույն արարքը համարում է խախտում, ապա Պալատի խորհուրդը փաստաբանին պատասխանատվության ենթարկելու հարցը լուծում է նախորդ խմբագրությամբ Կանոնագրքի համապատասխան կետով կամ ենթակետով:

Նոր կանոնագրքի 2.6.1 ենթակետի համաձայն՝ Պահպանելով Օրենքի, կանոնադրության և Կանոնագրքի նկատմամբ պահանջները՝ փաստաբանը պարտավոր է միշտ պաշտպանել իր վստահորդի շահերը և գերադասել դրանք իր անձնական և փաստաբան գործընկերների շահերից:

Նոր կանոնագրքի 2.7.1 ենթակետի համաձայն՝ Փաստաբանական գործունեության հասարակական-իրավական նշանակությունը փաստաբանից պահանջում է բարձր մասնագիտական պատրաստվածություն, օրենսդրության իմացություն և գործնական փորձ, փաստաբանական գործունեության մարտավարության մեթոդների և միջոցների, ինչպես նաև հոեպորական արվեստի տիրապետում:

Նոր կանոնագրքի 2.7.2 ենթակետի համաձայն՝ Փաստաբանը պարտավոր է վստահորդին բարեխիղճ իրավական օգնություն ցույց տալ իր մասնագիտական կարողությունների սահմաններում, ինչը ենթադրում է իրավունքի համապատասխան ճյուղի իմացություն, վստահորդի հանձնարարությանը վերաբերող բոլոր հանգամանքների ուսումնասիրություն, հանձնարարության պատշաճ կատարման համար անհրաժեշտ գործողությունների կատարում:

Տվյալ դեպքում Փաստաբանների վարքագիծը Նոր կանոնագրքով նույնպես խախտում է համարվում հետևապես Փաստաբանների արարքը պետք է որակվի Նոր կանոնագրքի 10.4 կետի համաձայն՝ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (2012թ.) 2.6.1, 2.7.1 և 2.7.2 ենթակետերով:

➤ **Փաստաբանի կողմից Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտման մասով**

Կանոնագրքի 3.5.5 ենթակետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է ժամանակին, գիտակցաբար և ջանասիրաբար խորհուրդ տալ և պաշտպանել իր վստահորդին և հանդես գալ նրա անունից:

Խորհուրդն արձանագրում է, որ Փաստաբանները վարել են բանակցություններ Դիմողի անունից և կազմակերպել են նրա հետ հանդիպումներ: Բացի այդ, Փաստաբանները կատարել են նաև հարցումներ, որոնք ուղղված են եղել Դիմողին ամուսնու գույքային միջոցների պարզմանը:

Նման պայմաններում Դիմողի անունից հանդես գալու և նրան խորհուրդներ տալու մասով Փաստաբանները իրենց պարտականությունը կատարել են, ինչի արդյունքն է նաև Պայմանագիրը, որը ստորագրվել է Դիմողի և իր ամուսնու միջև Փաստաբանների ջանքերով:

Բացի այդ, Դիմողը նույնպես ընդունել է, որ Փաստաբաններն իր անունից են բանակցել իր ամուսնու հետ:

Փաստաբանների կողմից թույլ տրված բացթողման գնահատականն արդեն տրվել է Կանոնագրքի 2.6.1, 2.7.1 և 2.7.2 ենթակետերի խախտումների նկարագրությամբ, հետևապես, Խորհուրդը Կանոնագրքի 3.5.5 ենթակետի խախտում չի արձանագրում, չնայած այն հանգամանքի, որ վստահորդի շահերի պաշտպանության ջանասիրությունը կարող էր նաև բավարար չլինել:

Վերոգրյալի հաշվառմամբ սույն ենթակետի մասով կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Կարգապահական տույժի ընդհանրությունը

Օրենքի 39.9 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *փաստաբանի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս փաստաբանների պալատի խորհուրդը հաշվի է առնում նաև խախտման հետևանքները, փաստաբանի անձը, մեղքի աստիճանը, առկա տույժերը, փաստաբանին բնութագրող ուշադրության արժանի այլ հանգամանքներ:*

Օրենքի 39.9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանի կարգապահական պատասխանատվության հարցը քննելուց հետո փաստաբանների պալատի խորհուրդը կարող է փաստաբանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի՝*

- 1) նկատողություն.
- 2) խիստ նկատողություն.
- 3) մասնակցել լրացուցիչ վերապատրաստման դասընթացների
- 4) տուգանք
- 5) փաստաբանի արտոնագրի գործողության դադարեցում:

Անդրադառնալով նշանակվող կարգապահական տույժի տեսակին՝ Խորհուրդը հաշվի է առնում վերոնշյալ հանգամանքները, այդ թվում՝ խախտման բնույթը, մեղքի աստիճանը, ինչպես նաև փաստաբան Տիգրան Եգորյանի և Լուսինե Հակոբյանի անձը բնութագրող հանգամանքները:

Վերոգրյալից ելնելով՝ Խորհուրդը գտնում է, որ սույն կարգապահական գործով անհրաժեշտ է ընտրել «խիստ նկատողություն» և «լրացուցիչ վերապատրաստման դասընթացների մասնակցություն» կարգապահական տույժերը:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերի պահանջներով, Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբաններ Տիգրան Եգորյանի (արտոնագիր՝ 1187) և Լուսինե Հակոբյանի (արտոնագիր՝ 1203) նկատմամբ Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 3.5.5 ենթակետի պահանջների խախտման հատկանիշներով (մասով) հարուցված կարգապահական վարույթը կարճել:

2. Փաստաբաններ Տիգրան Եգորյանին (արտոնագիր՝ 1187) և Լուսինե Հակոբյանին (արտոնագիր՝ 1203) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.6.1, 2.7.1 և 2.7.2 ենթակետերի խախտման հատկանիշներով:

3. Փաստաբան Տիգրան Եգորյանի (արտոնագիր՝ 1187) և Լուսինե Հակոբյանի (արտոնագիր՝ 1203) նկատմամբ կիրառել (նշանակել) կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն և իրենց հաշվին դեռնթուղոգիա թեմայով վերապատրաստման դասընթացի մասնակցություն 4 (չորս) ակադեմիական ժամով:

4. Հանձնարարել Պալլատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

Ծանոթություն. Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի
կարգապահական գործով
նիստը նախագահող՝

Հարություն Հարությունյան

**30 սեպտեմբերի 2020թ.
թիվ ԿԳ/81-Ա
ք. Երևան**